ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի համաձայն՝ հանրային պաշտպանը չի կարող այլ գործով իրավական օգնություն ցույց տալ, բացառությամբ իր կամ իր ազգականի գործով՝ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի թույլտվությամբ:

Սույն կանոնի խախտումը, որը կատարել է այդ կանոնի համար վերջին մեկ տարվա ընթացքում պատասխանատվության ենթարկված հանրային պաշտպանը, հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:

Եթե հանրային պաշտպանի գրասենյակի հանրային պաշտպանները ներկայացնում են հակառակորդ կողմերի շահեր, ապա պարտավոր են միմյանցից գաղտնի պահել գործի նյութերը և այդ գործը միմյանց միջև քննարկման առարկա չդարձնել: Հանրային պաշտպանները պարտավոր են ծանուցումներ ներկայացնել հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին և Պալատի նախագահին ու այդ պահից սկսած՝ գործի հսկողության տեսանկյունից այդ գործը ներկայացնել միայն Պալատի նախագահի կողմից նշանակված տարբեր փաստաբաններին: Նշված որևէ կանոնի խախտումը հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:

Հանրային պաշտպանն իրավունք չունի իր վստահորդից ընդունել գումար կամ այլ թանկարժեք (հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող) նվեր: Այդպիսի գումար կամ թանկարժեք նվեր ստանալու դեպքում, հանրային պաշտպանը պարտավոր է մեկ օրվա ընթացքում, գրավոր ծանուցում ներկայացնել հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին կամ Պալատի նախագահին ու ստացածը հանձնել Պալատին: Նշված կանոնի խախտումը հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:

Նմանատիպ սահմանափակումներ կան մի շարք պետություններում, մասնավորապես՝

ՌԴ փաստաբանի մասնագիտական էթիկայի օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանի պարտականությունները անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու դեպքում չեն տարբերվում վճարովի փաստաբանական

ծառայություններ մատուցող փաստաբանի պարտականություններից: Պատասխանատվության սահմաններն էլ երկուսի դեպքում նույն են[1]:

Փարիզի փաստաբանների ներքին կանոնակարգի համաձայն՝ այն դեպքերում, երբ անվճար իրավաբանական օգնություն է տրամադրվում, փաստաբանը կարող է ստանալ միայն օրենքով նախատեսված վճարումներ, մնացած այլ տեսակի վճարումների ընդունումը փաստաբանի կողմից արգելվում է[2]:

Վաշինգտոնի փաստաբանների ասոցիացիան պատասխանատվության է ենթարկել հանրային պաշտպան Թոմ Էարլին՝ իր վստահորդից 16500 ԱՄՆ դոլար վերցնելու համար, ում փաստաբանն անհատույց իրավական օգնություն է ցույց տվել: Ասոցիացիան հանրային պաշտպանին զրկել է փաստաբանական գործունեության արտոնագրումից[3]:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Փաստաբանների պալատի խորհուրդը լուծում է փաստաբանին պատասխանատվության ենթարկելու և կարգապահական տույժ նշանակելու հարցը: Հանրային պաշտպանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումն ընդունելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, հաղորդվում է նաև հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին:

Տաթևիկ Շալջյան
ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ

---

[1] http://www.fparf.ru/documents/normative_acts/1059/

[2] http://dl.avocatparis.org//reglement_interieur/RIBP.htm

[3] http://news.google.com/newspapers?nid=860&dat=20030702&id=iGopAAAAIBAJ&sjid=-8oEAAAAIBAJ&pg=3064,86790